

Արձանագրություն №4/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013թ. հունվարի 31-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկ): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում: (Զեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
2. ԵՊՀ գիտական խորհրդին կից Ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի ստեղծման մասին: (Զեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան)
3. Տեղեկատվություն դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2011-2012 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: (Զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
4. Տեղեկատվություն ԵՊՀ-ում իրականացվող ՏԵՄՊՈՒՄ-ի ծրագրերի ընթացքի և արդյունքների մասին: (Զեկ.՝ միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Ա. Մարգարով)
5. ԵՊՀ-ի կողմից ՀՀ հանրակրթական հաստատություններում իրականացվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների մասին: (Զեկ.՝ մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վ. Ս. Գալստյան)
6. Տեղեկատվություն ԵՊՀ ՈՒԳԸ 2011-2012 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ՈւԳԸ նախագահ Մ. Ա. Մալխասյան)
7. Ընթացիկ հարցեր
 - 7.1 ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մեխանիկայի ուսումնական լաբորատորիան պրոֆեսոր Միքայել Մանուկյանի անվամբ անվանակոչելու մասին:
 - 7.2 Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները հաստատելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդն էր.

| | Ազգանուն անուն հայրանուն | Ամբիոնը, պաշտոնը | Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը |
|----|--------------------------|--|---|
| 1. | Գրձելյան Ռուզան Ռուբենի | Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման ամբիոնի դոցենտ | Բանասիր. գիտ. դոկտոր /2011/ Ժ.02.03- համեմատական և տիպաբանական լեզվաբանություն, ղոցենտ /2004/ |

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Աշխատանքային վայրը, պաշտոնը | Գիտական աստիճանը, կոչումը /մասնագիտ. շիֆրը/ |
|----|-----------------------------|--|---|
| 1. | Ահարոնյան Նարինե Գևորգի | Հավանական. տես. և մաթեմ. վիճակ. ամբիոնի ասիստենտ | Ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2009/ Ա.01.05 – հավանական. տեսություն և մաթ. վիճակագրություն |
| 2. | Մարգարյան Ռեբեկա Հայկարամի | Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ | Բանասիր. գիտ. թեկնածու /1990/ Ժ.02.01 – Հայոց լեզու |
| 3. | Մաղաթեյան Ռիտա Գուրգենի | Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ | Բանասիր. գիտ. թեկնածու /1993/ Ժ.02.01 – Հայոց լեզու |
| 4. | Ստեփանյան Մերգեյ Լևոնի | Արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ | Բանասիր. գիտ. թեկնածու /2009/ Ժ.01.07 – արտասահմանյան գրական. |
| 5. | Վարդապետյան Զարուհի Համլետի | Անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի ասիստենտ | Բանասիր. գիտ. թեկնածու /2006/ Ժ.02.07 – գերմանական լեզուներ |
| 6. | Բայադյան Հրաչիկ Լադիկի | Ռադիոհեռուստ. ժուռնալիստիկայի ամբիոնի ասիստենտ | Ֆիզմաթ գիտ. թեկնածու /1988/ Ա.01.00 - մաթեմատիկա |
| 7. | Սյադայան Լիանա Կարապետի | Մամուլի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ | Բանասիր. գիտ. թեկնածու /2005/ Ժ.01.06 – ժուռնալիստիկա |
| 8. | Հարոյան Նելլի Հայկի | Սոցիալական հոգեբանության ամբիոնի ասիստենտ | Հոգեբանական գիտ. թեկնածու /2008/ ԺԹ.00.02 – սոցիալական հոգեբանութ. |

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 61 անդամները: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Բուդադյան Արմեն Ստեփանի (նախագահ), Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի, Գրիգորյան Ռաֆիկ Գրիշայի, Բաղդասարյան Մերի Ռուբենի, Մարգարյան Լևոն Սուրենի:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուն ընտրվեց փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

| h/h | Ազգանուն, անուն, հայրանուն | Կողմ | Դեմ | Անվավեր |
|-----|----------------------------|------|-----|---------|
| 1. | Գրձելյան Ռուզան Ռուբենի | 53 | 5 | 3 |

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

| h/h | Ազգանուն, անուն, հայրանուն | Կողմ | Դեմ | Անվավեր |
|-----|-----------------------------|------|-----|---------|
| 1. | Ահարոնյան Նարինե Գևորգի | 60 | 0 | 1 |
| 2. | Մարգարյան Ռեբեկա Հայկարամի | 59 | 1 | 1 |
| 3. | Սաղաթեյան Ռիտա Գուրգենի | 59 | 1 | 1 |
| 4. | Ստեփանյան Սերգեյ Լևոնի | 60 | 0 | 1 |
| 5. | Վարդապետյան Զարուհի Համլետի | 58 | 2 | 1 |
| 6. | Բայադյան Հրաչիկ Լադիկի | 60 | 0 | 1 |
| 7. | Սայադյան Լիանա Կարապետի | 60 | 0 | 1 |
| 8. | Հարոյան Նելլի Հայկի | 60 | 1 | 0 |

Արտահայտվեցին. – Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տես. ինֆորմ. ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը:

Որոշեցին. - 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՂ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

2. Լսեցին. - ԵՊՀ գիտական խորհրդին կից Ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի ստեղծման մասին: (Ձեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան)

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը:

Որոշեցին. – 2.1 Ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդին կից Ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Արամ Սիմոնյան - ԵՊՀ ռեկտոր, (հանձնաժողովի նախագահ)
2. Լիլիթ Հակոբյան - Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրեն (հանձնաժողովի քարտուղար)
3. Ալեքսանդր Գրիգորյան - Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
4. Գեղամ Գևորգյան - Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր
5. Ռուբեն Մարկոսյան - Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր
6. Արարատ Մալխասյան - Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
7. Հրանտ Ժամհարյան - Ուսումնամեթոդական վարչության պետ
8. Կարեն Գրիգորյան - Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ
9. Արշալույս Հովհաննիսյան – Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետ,
10. Էդգար Հարությունյան - Գիտակազմակերպչական բաժնի վարիչ
11. Ալեքսանդր Մարգարով – Պրակտիկայի բաժնի վարիչ
12. Տարիել Ղոչիկյան - Քիմիայի ֆակուլտետի դեկան
13. Էմիլ Գևորգյան - Կենսաբանության ֆակուլտետի դեկան
14. Մարատ Գրիգորյան - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան

15. Վահրամ Դումանյան - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան
16. Սամվել Շուքուրյան - Տեղակատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական կենտրոնի գիտական դեկավար,
17. Քրիստինե Անտոնյան - Տնտեսագիտության ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
18. Գրիգոր Շահինյան – ԵՊՀ ՈՒԳԸ փոխնախագահ, Կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտ,
19. Արտյոմ Բալոյան – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ՈՒԽ նախագահ
20. Անժելիկա Ֆրանկյան – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի, ՈՒԽ սոցիալական հանձնաժողովի նախագահ:

2.2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին.- Տեղեկատվություն դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2011-2012 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):** Հ. Ժամհարյանը ներկայացրեց 2011-12 ուստարվա ուսանողական հարցումներին ուսանողների մասնակցությունն ըստ ֆակուլտետների, հարցման ընդհանուր արդյունքները, դեկանատների աշխատակիցների գնահատման արդյունքները, հարցման տեղեկատվական հատվածի հարցերն ու դրանց արդյունքները, կուրատորների բաշխվածությունն ըստ ֆակուլտետների:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Միմոնյանը, գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը: Ռեկտոր Ա. Միմոնյանը դժգոհություն հայտնեց կուրատորների ինստիտուտի կայացման ներկա իրավիճակի շուրջ՝ անհրաժեշտ համարելով կուրատորների ակտիվ ներգրավումը, ի թիվս այլ ոլորտների, նաև ուսման վարձերի հավաքագրման ոլորտում:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** – **Տեղեկատվություն ԵՊՀ-ում իրականացվող ՏԵՄՊՈՒՍ-ի ծրագրերի ընթացքի և արդյունքների մասին: (Ձեկ.՝ միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Ա. Մարգարով):** Ա. Մարգարովը ներկայացրեց ՏԵՄՊՈՒՍ ծրագրի էության, առաքելության կողմնորոշումների մասին, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ի ունեցած և ունենալիք մասնակցության մասին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, պրոռեկտոր Գ. Գևորգյանը:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին.** ԵՊՀ-ի կողմից ՀՀ հանրակրթական հաստատություններում իրականացվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների մասին: (Ձեկ.՝ մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վ. Ս. Գալստյան): Վ. Գալստյանը ներկայացրեց նշված ուղղությամբ ԵՊՀ կողմից իրականացրած աշխատանքների ընդհանուր բնութագիրը, այդ աշխատանքներում ներգրավված դպրոցների թիվն ու այնտեղից ԵՊՀ ընդունված աշակերտների թիվն ըստ տարիների (2007-12 ուստարիներ), ՀՀ հանրակրթական դպրոցներում ԵՊՀ պրոֆ-դասախոսական կազմի կողմից անցկացված դասախոսությունների թիվն ըստ տարիների, ԵՊՀ-ում անցկացված դպրոցականների օլիմպիադայի մասնակիցների և պարզատրվածների թիվն ըստ տարիների, 2009-12թթ. ԵՊՀ-ում անցկացված օլիմպիադաներում լավագույն մասնակցություն և բարձր արդյունք ցուցաբերած դպրոցները և այլ տեղեկություններ:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Յ. Վարդանյանը, կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Գևորգյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան Մ. Գրիգորյանը, մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանը, տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Հ. Սարգսյանը, միջազգային կենտրոնի տնօրեն Լ. Շեկյանը, գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը:

Որոշեցին. – ընդունել ի գիտություն:

6. Լսեցին. – **Տեղեկատվություն ԵՊՀ ՌԻԳԸ 2011-2012 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ՌԻԸ նախագահ Մ. Ա. Մալխասյան):** Իր ելույթում Մ. Մալխասյանը ներկայացրեց ՌԻԳԸ կազմը, հրատարակած աշխատանքների տեսակներն ու թիվը, իրականացված նստաշրջանները, կազմակերպված միջոցառումները, հանրապետական, միջբուհական և ֆակուլտետային գիտաժողովները, գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման դասընթացները, սեմինար-քննարկումները, գիտաճանաչողական էքսկուրսիաները և այլն:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը, կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Գևորգյանը, ԻԿՄ ֆակուլտետի ղեկան Վ. Դումանյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանը:

Որեցին. – ընդունել ի գիտություն:

7. Լսեցին – ընթացիկ հարցեր:

7.1 Լսեցին. - **ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մեխանիկայի ուսումնական լաբորատորիան պրոֆեսոր Միքայել Մանուկյանի անվամբ անվանակոչելու մասին:**

Հաշվի առնելով պրոֆեսոր Միքայել Մանուկյանի մեծ ավանդը մեխանիկայի հայկական դպրոցի կայացման և զարգացման գործում, նկատի ունենալով նրա արգասավոր գործունեությունը ԵՊՀ-ում՝

Որոշեցին. –

1. Ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մեխանիկայի ուսումնական լաբորատորիան անվանակոչել պրոֆեսոր Միքայել Մանուկյանի անվամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7.2 Լսեցին. - **Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները հաստատելու մասին:** Ֆակուլտետի ղեկանի տեղակալի նոր հաստիքի բացվելու պատճառով ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխություն անելու պահանջից ելնելով՝

Որոշեցին. – ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

06.02.2013թ.